պէտք չունեն, որովհետեւ էլ գողեր չկան: Կարող ես գլխիդ ոսկի դնել եւ աներկիւղ ուր որ ուզում ես գնալ: Ամէն տեղ ապահովութիւն է տիրում: Թէ՛ աղքատի խրճիթից, թէ՛ հարուստի տնից միայն աղօթք ու գոհութիւն է լսւում: Ոչինչ դժգոհութիւն չկայ:

Միշտ միեւնոյն զզուելի շողոքորթութիւնները, միշտ միեւնոյն անվերջ կեղծաւորութիւնները չափ չունէին: Եւ այդ շողոքորթութիւնների մէջ պէտք էր որոնել երկրի գլխաւոր թշոառութիւնը: Ես այժմ կատարելապէս հասկանում էի այն ճառի ճշմարտութիւնը, որ Ասլանը կարդաց ինձ եւ Մարօին Ս. Տիրամօր տօնախմբութեան ժամանակ, թէ որպիսի վնասակար դեր են խաղում ժողովրդի ներկայացուցիչները նրա անբախտ վիճակի մէջ: Այն ժամանակ ես լսում էի միայն խօսքեր, թէ ի՞նչ է անում կղերը, կառավարութեան պաշտօնեան, դրամատէրը, եւ դրանց նմանները, իսկ այժմ տեսնում էի նրանց կենդանի տիպարները: Դիցուք թէ, Ասլանը լինէր մի կոնսուլ, մի պաշտօնական անձ, որ ուղարկուած էր երկրի դրութիւնը քննելու: Նա խօ չէր մտնի գիւղացու խրճիթը, նա խօ չէր դիմի սոված քաղաքացուն: Նա ամէն տեղ կը հանդիպէր այդ տեսակ շողոքորթների եւ ի՞նչ գաղափար կարող էր կազմել երկրի դրութեան մասին: Ի հարկէ, լաւ: Նոյնիսկ երկրի բարձր կառավարութեան առջեւ՝ այդ մարդիկը վնասակար դեր են խաղում: Երբ հարստահարուածների բողոքը հասնում է մինչեւ Բարձրագոյն Դուռը, երբ գանգատւում են փաշային, մուդուրի, գայմագամի կամ այս եւ այն անիրաւ զեղծումների մասին, տեսար, ահա հաւաքուեցան շողոքորթները եւ, հակառակ բողոքագրին, մի շնորհակալութեան հանրագիր կազմեցին եւ ուղարկեցին Պոլիս: Ամէն բան քանդւում է: Հարստահարուածների ձայնը խեղդւում է, որովհետեւ շողոքորթներին աւելի են հաւատում, որովհետեւ նրանք են ժողովրդի ներկայացուցիչները, նրա «երեւելիները»: Դրանց շահերը կապած են երկրի կեղեքիչների շահերի հետ, շատ հասկանալի է, որ նրանց անիրաւութիւնները կը պաշտպանեն:

Ասլանը, երեւի, չկարողացաւ իրան զսպել, ասաց.

— Անկարգութիւններ, այսոամենայնիւ, պատահում են: Իմ անցնելու միջոցին, Պարսկաստանի սահմանագծի վրայ, սարսափելի բարբարոսութիւններ էին կատարուել: Քրդերի ջալալի կոչուած ցեղը անցել էր սահմանը եւ պարսից հողի վրայ այրել էր տասնից աւելի հայոց գիւղորայք: Նրանց անասունները աւարի էին առնուած, հովիւներին կոտորել էին: Այդ աւազակութիւնները այն աստիճան երկիւղ էին տարածել շրջակայքում, որ քարաւանների երթեւեկութիւնը բոլորովին դադարած էր. հունձերը մնացել էին անխնամ, երկրագործները չէին համարձակւում դաշտ դուրս գալ: